ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**«ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

03.03.2016թ.
ժամը՝ 10:00

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝**

*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)*
աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդ. Շախկյան:
**Անդամներ՝**

*Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)*
աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Ժ.Հարությունյան:
աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան:
*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)*
աշխատակազմի հաշվապահական հաշվառման գլխավոր մասնագետ Ա. Բաբուջյան:
աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ՝ Ա.Ջուլհակյան:
**Հանձնաժողովի քարտուղար՝**
*Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)*
աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Ադոնց:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկաների /1-3 չափաբաժինների/ ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված:

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**
«ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության շենքում, ք. Երևան, կառավար. տուն, մասն. 2 հասցեում, մարտի 03-ին ժամը 10:00-ին:

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

| N/N | Մասնակցի անվանումը | Կազմակերպության հասցեն |
|---|---|---|
| 1 | <<Հույս Մոտոր>> ՍՊԸ | huysmotor@yandex.ru |
| 2 | <<ԴԱՐՖ>> ՍՊԸ | darf-llc@mail.ru |

| | | |
|---|---|---|
| 3 | <<Էլբատ>> ՍՊԸ | sales.dep@elbat.am |
| 4 | <<Մ. Բուատ>> ՍՊԸ | mbuat@yandex.ru |

**3. Տվյալներ՝ ներկայացված հայտերը ԳՊ/ԲԱ-ի կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին.**

3.1 «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

3.2 «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

3.3 «Էլբատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

3.4 «Մ. Բուատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին .**

4.1 **«ՀՀ ԷԲՊՆ-2016-ԾՀԱՊՁԲ-15/6»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի, «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի, «Էլբատ» ՍՊԸ–ի և «Մ. Բուատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

**1) Պիտանելիության չափորոշիչ՝**

ա) դիմում ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու մասին (Հավելված 1)

բ) հայտարարություն ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին (Հավելված 2):

**2) Տեխնիկական չափորոշիչ ՝**

ա) հայտարարություն մասնագիտական փորձառության մասին (Հավելված 3.1)

բ) հայտարարություն տեխնիկական միջոցների մասին (Հավելված 3.2)

գ) հայտարարություն ֆինանսական միջոցների մասին (Հավելված 3.3)

դ) հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին (Հավելված 3.4)

ե) հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ (Հավելված 4.1)

զ) հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ (Հավելված 4.2)

3) **Ֆինանսական չափորոշիչ՝** գնային առաջարկ (Հավելված 4):

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ի, «Էլքատ» ՍՊԸ-ի և «Մ. Բուատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է Հավելված 4.2-ը:

**5. Մասնակիցների առաջարկած գները.**

Մասնակիցների կողմից գնային առաջարկները կցվում է հավելվածով (1 թերթ):

**6. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

Բանակցություններ չեն վարվել:

**7. Հանձնաժողովը որոշեց՝**

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝
ա) մեկ աշխատանքնային օրով կասեցնել նիստը
բ)տեղեկացնել «Հույս Մոտոր» ՍՊԸ-ին՝ իր ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն՝ ԾՀ ընթացակարգին մասնակցելու դիմում-հավելված 1-ում նշված է, որ մասնակիցը առաջարկում է ԵՏՄ անդամ երկների արտադրության ապրանք, մինչդեռ ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարություն-հավելված 4.2-ը հայտում ներառված չի: Առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև 04.03.2016թ. ժամը 18.00-ն շտկել անհամապատասխանությունները

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | **Էդ. Շախկյան** | ........................ |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | **Ժ. Հարությունյան** | ........................ |
| | **Ն. Հակոբյան** | ........................ |

Ա. Բաբուջյան ..............................

Ա. Զոլիակյան ..............................

Քարտուղար՝ Լ. Աղոնց ..............................

Հավելված

ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-15/6 ծածկագրով ՇՀ ընթացակարգի միջոցով մասնակիցների կողմից գնային առաջարկներ

ԱԱՀ-ով

| N | Մասնակից կազմակերպությունների անվանումը | Չափաբաժին 1 | Չափաբաժին 2 | Չափաբաժին 3 |
|---|---|---|---|---|
| | | Ավտոմեքենայի անիվներ | Ավտոմեքենայի անիվներ | Մարտկոց ԿՄ 6 US-60 |
| 1 | <<Հույս Մոտոր>> ՍՊԸ | 279600 | 351360 | 104950 |
| 2 | <<ԴԱՐՖ>> ՍՊԸ | 197400 | 470400 | 112500 |
| 3 | <<Էլբատ>> ՍՊԸ | – | – | 152500 |
| 4 | <<Մ. Բուատ>> ՍՊԸ | 279450 | 449880 | – |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/1

**«ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 09.03.2016թ.
ժամը՝ 10:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)*
աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդ. Շախկյան:

**Անդամներ՝**

*Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)*
աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Ժ.Հարությունյան:
աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան:
*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)*
աշխատակազմի հաշվապահական հաշվառման գլխավոր մասնագետ Ա. Բաբուջյան:
աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ՝ Ա.Զուլիակյան:

**Հանձնաժողովի քարտուղար՝**

*Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀՄ)*
աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Ադոնց:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց 09.03.2016թ. կասեցված նիստը շարունակելու մասին: Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց այն հարցը, որ <<Հույս Մոտոր>> ՍՊԸ-ի կողմից <<armeps.am>> համակարգ չէր կցվել ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարություն-հավելված 4.2-ը: <<Հույս Մոտոր>> ՍՊԸ-ի կողմից շտկվել էր արձանագրված անհամապատասխանությունը:

**Հանձնաժողովն ամփոփեց ներկայացված հայտերը, որի համաձայն՝**

- «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի հայտը, ներկայացված 1, 2 և 3-րդ չափաբաժինների համար, համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:
- «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը, ներկայացված 1, 2 և 3-րդ չափաբաժինների համար, համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:
- «Մ. Բուատ» ՍՊԸ-ի հայտը, ներկայացված 1 և 2-րդ չափաբաժինների համար, համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:
- «ԷԼԲԱՏ» ՓԲԸ-ի հայտը, ներկայացված 3-րդ չափաբաժնի համար, համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

**Հանձնաժողովը որոշեց՝**

**1.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետը՝

ա) «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի, «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի, «Մ. Բուատ» ՍՊԸ-ի և «ԷԼԲԱՏ» ՓԲԸ-ի հայտերը գնահատել բավարար:

**2.** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը, ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա) 1-ին չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԴԱՐՖ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ « Մ. Բուատ » ՍՊԸ-ին:

բ) 2-րդ և 3-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հույս Մոտոր» ՍՊԸ-ի, 2-րդ տեղ 2-րդ չափաբաժնով «Մ. Բուատ» ՍՊԸ-ին, իսկ 3-րդ չափաբաժնով «ԴԱՐՖ» ՍՊԸ-ին:

**3.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը

ա)Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

բ) ծանուցել «Հույս Մոտոր» ՍՊԸ-ին և «ԴԱՐՖ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Էդ. Շախկյան | ........................ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ժ. Հարությունյան | ........................ |
| | Ն. Հակոբյան | ........................ |
| | Ա. Բաբուջյան | ........................ |
| | Ա. Ջուլհակյան | ........................ |
| Քարտուղար՝ | Լ. Ադոնց | ........................ |